ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ- ԼՄՍՀ-ՇՀԱՇՁԲ-15/8-17/1

ք. Ստեփանավան <<14>> ապրիլի 2017թ.

Ստեփանավանի համայնքապետարանն , ի դեմս համայնքի ղեկավար Մ. Ղարաքեշիշյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էքսկլյուզիվ Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Մովսեսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է կանաչապատման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության **2** օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից **5** օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 6217200 (վեց միլիոն երկու հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ : Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30.10.2017 թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում[2]:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[3]:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ստեփանավանի համայնքապետարան	«Էքսկլյուզիվ Սերվիս» ՍՊԸ
ք.Ստեփանավան, Ս.Սարգսյան 1	ք.Ստեփանավան Գ.Նժդեհի 17/20
ՀՀ Ֆինանսների նախարարության	ԱՇԲ Ստեփանավան մ/ճ
գործառնական վարչություն	ՀՀ 2471401745220000
ՀՀ900252101473	ՀՎՀՀ 06946837
ՀՎՀՀ 06400733	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1
<<14>>ապրիլի 20 17 թ. կնքված N ՀՀ- ԼՄՍՀ-ՇՀԱՇՁԲ-15/8-17/1
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ձեռքբերվող Աշխատանքի նկարագիր

Հ/Հ	CPV կոդեր	Աշխատանքի անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափի միավորը	Քանակը
Թփեր և թփուտներ					
1	77311600	**Թփապատվող տարածքների մաքրում, աղբի տեղափոխում:**	Տարածքը որը ընտրված է թփապատման համար անհրաժեշտ է մաքրել աղբի, չորացած նստվածքային խոտամնացուկների, չորացած ճյուղերից և տերևներից: Հավաքված աղբը անհրաժեշտ է բարձել ավտոինքնաթափ և տեղափոխել աղբավայր:	քմ	1500
2	77311600	**Նոր թփերի ձեռք բերում և տնկում:**	Թփապատման համար անհրաժեշտ են տարածաշրջանում առավելապես օգտագործվող՝ նոճի ֆորչիցիա(դեղին ծաղիկ), ասպիրակ, կեղծ հասմիկ, բարբարիս, բիրյուչինա և այլ թփատեսակներ, որոնց բարձրությունը պետք է լինի ոչ պակաս 40 սմ, 2 - 3 տարեկան: Թփերը պետք է տնկվեն խրամուղում միմյանցից 20 սմ հեռավորությամբ և 20 - 30 սմ խորությամբ: Հողի հետլիցքը իրականացնել գետնի մակերևույթից ցածր ոռոգման նպատակով:	հատ	1500
3	77311600	**Նորատունկ և գոյություն ունեցող թփերի պահպանում և ոռոգում:**	Աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել անհրաժեշտ ձևավորման պահանջով, պարբերաբար ուղղել թեքված տնկիները, տոփանել հետլիցքը, իրականացնել պահանջվող փխրեցում, տնկիների հարևանությամբ (մինչև 50 սմ լայնությամբ) վերացնել խոտածածկը իրականացնել պահանջվող բարձրությամբ էտում, ոռոգումը ըստ անհրաժեշտության: Ճանապարհամերձ թփերը պետք է ունենան եռաշարք շախմատային դասավորվածություն:	քմ	23000
Ծառեր					
1	77311600	**Փոխարինման ենթակա ծառերի տնկում նախկին տեղում**	Անհրաժեշտ է համայնքի տարածքում, մայթեզրերին և նախկինում ծառատունկ իրականացված տարածքներում փոխարինել չորացած, հատած և հանված ծառերը, դրանք փոխարինել նախկինում գոյություն ունեցող տեսակով: Հիմնականում տնկիները կարող են լինել թխկի, հացենի, բարդի, լորենի և այլ տեսակներ որոնց հասակը պետք է լինի 1,5մ ոչ պակաս, ունենա առնվազն	հատ	420

			3 ճյուղ, մազարմատային բավարար ցանց և անվնաս մայրարմատ: Տնկիները պետք է լինեն 2-3 տարեկան:		
2	77311600	**Նոր ծառատունկի իրականացում դեկորատիվ ծառերով:**	Տնիկիների հիմնական տեսակը տերևավորներ են, կարող են օգտագործվել նաև փշատերև ծառեր 3-4 տարեկան, հասակը 1,5մ-ից ոչ պակաս, արմատային բավարար և անվնաս ցանց, փշատերևները հողային կոմով, փարթամ տեսքով: Փոսերը պետք է ունենան ոչ պակաս 50 սմ տրամագիծ և 50 սմ - ից ոչ պակաս խորություն: Հողային աշխատանքները իրականացվում են 4-րդ կարգի գրունտներում	հատ	3150
3	77311600	**Նորատունկ և նախկինում տնկված ծառերի էտում, խնամք և ոռոգում:**	Նորատունկ ծառերը անհրաժեշտ է մաքրել ավելորդ՝ բնի հատվածում ճյուղերից, գագաթին թողնելով առնվազն 3 ճյուղ, հողի հետլիցքից հետո թողնել փոքրիկ իջվածք, ոռոգման ջուրը պահպանելու համար, իսկ նախկինում տնկված ծառերի բնի չորս կողմը, մաքրել բուսականությունից փխրեցնել ձեռքով չվնասելով ծառը: Ծառերի ոռոգումը իրականացնել ելնելով անհրաժեշտությունից և եղանակային պայմաններից:	հատ	21000
4	77311600	**Ծառերի էսթետիկ և պահպանողական սպիտակեցում:**	Սպիտակեցնող լուծույթը պետք է ունենա համապատասխան բաղադրություն, սպիտակեցվող մասի բարձրությունը պետք է լինի 1,0 մ -ից ոչ պակաս, ծառաբունը պետք է մաքրել չոր ճաքճքած կեղևից և փոշուց	հատ	460
Ծաղկանոցներ և դեկորատիվ կոմպոզիցիաներ					
1	77311600	**Տարածքների մաքրում, հողի փորում, փխրեցում:**	Ծաղկանոցների և կոմպոզիցիաների տարածքները անհրաժեշտ է մաքրել աղբից չորացած տերևներից և հնուկներից, աղբը բարձել ինքնաթափին և տեղափոխել աղբավայր: Հողը փորել ձեռքով, փխրեցնել, հարթեցնել փոցխերի օգնությամբ տալով անհրաժեշտ կոմպոզիցիոն տեսք:	քմ	2500
2	77311600	**Ծաղկատնկում:**	Ծաղկատեսակները և սածիլատեսակները սերմնացանվում կամ սածիլատնկվում են ըստ պահանջվող ծաղկապատման կամ կոմպոզիցիոն ձևավորման: Սածիլները պետք է ունենան տեսակին համապատասխան բարձրություն և ցողունի հաստություն, ապահովելով պահանջվող գունային և քանակային առկայություն:	քմ	2500
3	77311600	**Ծաղկանոցների խնամք ոռոգում և պայքար վնասատուների դեմ:**	Ծաղկանոցները անհրաժեշտ է խնամել ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան, ոռոգել ելնելով եղանակային պայմաններից, հիվանդությունների և վնասատուների	քմ	12500

			դեմ պայքարը իրականացնել համապատասխան մասնագիտական և ռեսուրսային մոտեցմամբ :		
Խոտածածկեր սիզամարգեր					
1	77311600	**Խոտածածկերի և սիզամարգերի տարածքների մաքրում:**	Աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել վաղ գարնանը և ուշ աշնանը ձեռքի պարզ գործիքներով, հավաքած աղբը բարձել ավտոինքնաթափին և տեղափոխել աղբավայր	քմ	24000
2	77311600	**Վնասված հատվածների վերականգնում:**	Վերականգնում պահանջող տարածքները փխրեցնել, սերմնացանել և իրականացնել անհրաժեշտ ոռոգում խոտածածկ ամբողջ տարածքով:	քմ	200
3	77311600	**Խոտածածկերի և սիզամարգերի խնամք և ոռոգում:**	Խոտածածկերը և սիզամարգերը անհրաժեշտ է հնձել սիզակալսիչով սեզոնին ոչ պակաս 3 անգամ, խոտի բարձրությունը պետք է չգերազանցի 15 սմ, ոռոգումը իրականացնել ելնելով եղանակային պայմաններից:	քմ	120000

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագրի կնքման օրից	30.10.2017թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ստեփանավանի համայնքապետարան
ք.Ստեփանավան, Ս.Սարգսյան 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ90025210147 3
ՀՎՀՀ 06400733

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Էքսկլյուզիվ Սերվիս» ՍՊԸ
ք.Ստեփանավան Գ.Նժդեհի 17/20
ԱՇԲ Ստեփանավան մ/ճ
ՀՀ 247140174522000
ՀՎՀՀ06946837

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
<< 14 >> ապրիլի 2017 թ. կնքված
N ՀՀ- ԼՄՍՀ-ԵՀԱՇՁԲ-15/8-17/1 ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չ/Մ	Քանակը ըստ ամիսների							Ընդամենը
			IV	V	VI	VII	VIII	IX	X	
	Թփեր և թփուտներ									
1	Թփապատվող տարածքների մաքրում, աղբի տեղափոխում:	քմ		1000	500					1500
2	Նոր թփերի ձեռք բերում և տնկում:	հատ		1000	500					1500
3	Նորատունկ և գոյություն ունեցող թփերի պահպանում և ոռոգում:	քմ			4600	4600	4600	4600	4600	23000
	Ծառեր									
1	Փոխարինման ենթակա ծառերի տնկում նախկին տեղում:	հատ		150	120		11	42	97	420
2	Նոր ծառատունկի իրականացում դեկորատիվ ծառերով:	հատ		537	1312			801	500	3150
3	Նորատունկ և նախկինում տնկված ծառերի էտում, խնամք և ոռոգում:	հատ		3500	3500	3500	3500	3500	3500	21000
4	Ծառերի էսթետիկ և պահպանողական սպիտակեցում:	հատ			460					460
	Ծաղկանոցներ և դեկորատիվ կոմպոզիցիաներ									
1	Տարածքների մաքրում, հողի փորում, փխրեցում:	քմ		750	750	1000				2500
2	Ծաղկատնկում:	քմ		581	1000	919				2500
3	Ծաղկանոցների խնամք ոռոգում և պայքար վնասատուների դեմ:	քմ			2500	2500	2500	2500	2500	12500
	Խոտածածկեր սիզամարգեր									
1	Խոտածածկերի և սիզամարգերի տարածքների մաքրում:	քմ		12000					12000	24000
2	Վնասված հատվածների վերականգնում:	քմ		200						200
3	Խոտածածկերի և սիզամարգերի խնամք և ոռոգում և հնձում:	քմ			24000	24000	24000	24000	24000	120000

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Գին	Քանակը ըստ ամիսների						
			V	VI	VII	VIII	IX	X	Ընդամենը
	Թփեր և թփուտներ								
1	Թփապատվող տարածքների մաքրում, աղբի տեղափոխում:	10	10000	5000					**15000**
2	Նոր թփերի ձեռք բերում և տնկում:	260	260000	130000					**390000**
3	Նորատունկ և գոյություն ունեցող թփերի պահպանում և ոռոգում:	12		55200	55200	55200	55200	55200	**276000**
	Ծառեր								
1	Փոխարինման ենթակա ծառերի տնկում նախկին տեղում:	800	120000	96000		8800	33600	77600	**336000**
2	Նոր ծառատունկի իրականացում դեկորատիվ ծառերով:	450	241650	590400			360450	225000	**1417500**
3	Նորատունկ և նախկինում տնկված ծառերի էտում, խնամք և ոռոգում:	43	150500	150500	150500	150500	150500	150500	**903000**
4	Ծառերի էսթետիկ և պահպանողական սպիտակեցում:	260		119600					**119600**
	Ծաղկանոցներ և դեկորատիվ կոմպոզիցիաներ								
1	Տարածքների մաքրում, հողի փորում, փխրեցում:	20	15000	15000	20000				**50000**
2	Ծաղկատնկում:	402	233562	402000	369438				**1005000**
3	Ծաղկանոցների խնամք ոռոգում և պայքար վնասատուների դեմ:	36		90000	90000	90000	90000	90000	**450000**
	Խոտածածկեր սիզամարգեր								

1	Խոտածածկերի և սիզամարգերի տարածքների մաքրում:	8	96000					96000	**192000**
2	Վնասված հատվածների վերականգնում:	89.5	17900						**17900**
3	Խոտածածկերի և սիզամարգերի խնամք և ոռոգում և հնձում:	4		96000	96000	96000	96000	96000	**480000**
ԸՆԴԱՄԵՆԸ									**5652000**
Շահույթ 10%									**565200**
ԸՆԴԱՄԵՆԸ									**6217200**

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում								
		մարտ	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Ստեփանավան համայնքի կանաչապատման աշխատանքներ	1259073	3183743	4042995	4483545	5347870	6217200	6217200	6217200	6217200

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ստեփանավանի համայնքապետարան
ք.Ստեփանավան, Ս.Սարգսյան 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ900252101473
ՀՎՀՀ 06400733

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Էքսկլյուզիվ Սերվիս» ՍՊԸ
ք.Ստեփանավան Գ.Նժդեհի 17/20
ԱՇԲ Ստեփանավան մ/ճ
ՀՀ 2471401745220000
ՀՎՀՀ06946837

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
<< 14>> ապրիլի 2017 թ.
կնքված N ՀՀ- ԼՄՍՀ-ՇՀԱՇՁԲ-15/8-17/1 ծածկագրով գնման պայմանագրի

Պատվիրատու
Ստեփանավանի համայնքապետարան
գտնվելու վայրը ք.Ստեփանավան, Ս.Սարգսյան 1
հհ900252101473
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
հվհհ06400733

Պայմանագրի կողմ
«Էքսկլյուզիվ Սերվիս» ՍՊԸ
գտնվելու վայրը ք.Ստեփանավան Գ.Նժդեհի 17/20
հհ2471401745220000
ԱՇԲ Ստեփանավան մ/6
հվհհ 06946837

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Ստեփանավան համայնքի կանաչապատման աշխատանքներ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «14» «ապրիլի» 2017թ.

Պայմանագրի համարը՝ *ՀՀ- ԼՄՍՀ-ՇՀԱՇՁԲ-15/8-17/1*

Պատվիրատուն՝ ի դեմս Ստեփանավան համայնքի ղեկավար Մ. Ղարաքեշիշյանի_ և Պայմանագրի կողմը՝ ի դեմս «Էքսկլյուզիվ Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Մովսեսյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Ստեփանավան համայնքի կանաչապատման աշխատանքներ				մայիս-հոկտեմբեր		6217.2	
	Ընդամենը						6217.2	

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
ստորագրություն
Ա.Մովսեսյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
ստորագրություն
Մ. Ղարաքեշիշյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
<< 14 >> ապրիլի 2017թ. կնքված
կնքված N ՀՀ- ԼՄՍՀ-ՇՀԱՇՁԲ-15/8-17/1 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Ստեփանավանի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Էքսկլյուզիվ Սերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ. ապրիլի 14-ին կնքված N ՀՀ- ԼՄՍՀ-ՇՀԱՇՁԲ-15/8-17/1 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**
Ստեփանավան համայնքի կանաչապատման աշխատանքներ		

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ա.Մովսեսյան
ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

Մ. Ղարաբեշիշյան
ազգանուն, անուն

ստորագրություն